

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/2

28 մարտի 2013թ.

Քննարկվեց <Մատակարարման, արտադրության, վերանորոգման կենտրոն> ՓԲԸ 12.02.2013թ-ի գրությամբ բերված գանգատը:

<Մատակարարման, արտադրության, վերանորոգման կենտրոն> ՓԲԸ (այսուհետ նաև ընկերություն) գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.12.2012թ. թիվ ԱՀ 020309 հանձնարարագրի հիման վրա ընկերությանը պատկանող գույքի վրա՝ ընդհանուր գումարով 1.109.0 հազար դրամի, չկատարված պարտավորությունների չափով Կենտրոնի ՀՏ 17.12.2012թ. թիվ 020309 որոշմամբ արգելանք է դրվել:

Արգելանքը դրվել է ընկերության բանկային հաշվեհամարների, ք.Երևան, Գ.Քոչարի 21 հասցեում գտնվող գույքի, դրամարկղի, շարժական և անշարժ գույքի վրա՝ 1.109.000 դրամի չափով:

18.12.2012թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ ակտ, որի համաձայն ընկերության տնօրենի նկատմամբ արձանագրվել է հարկերը սահմանված ժամկետում չվճարելու փաստ և կիրառվել է <ՎԻՎ> օրենսգրքի 170/3 հոդվածի դրույթը:

25.12.2012թ-ին ընկերության կողմից կատարվել է վճարում 1.109.000 դրամի չափով նկատի ունենալով, որ տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը խաթարվել էր որոշման պատճառով:

11.01.2013թ. դիմումով կատարված հարցմանը, թե որ ժամանակահատվածում է գոյացել նշված պարտավորությունը, ներկայացվել է տեղեկանք: Վերջինիս համաձայն, ընկերության պարտավորությունը ստուգման ակտերի 10 տոկոսի գծով 17.12.2012թ-ի դրությամբ կազմում է 1.109.000 դրամ, որն առաջացել է 30.06.1998թ. թիվ 120973 ստուգման ակտով արձանագրված գումարի 10 տոկոսից՝ գումարով 1.063.900 դրամ և 16.06.2003թ. թիվ 120973 ստուգման ակտով արձանագրված գումարի 10 տոկոսից՝ 45.100 դրամ: Այսինքն, վիճելի գումարը վերաբերում է դեռևս 1999թ. օգոստոսի 04-ին կայացված /Գործ հ.2-731/ վճռով բռնագանձվող գումարին, որով վճռվել է՝ Երևանի Մյասնիկյանի ՏՀՏ հայցը բավարարել մասնակի:

20.12.1999թ. կայացված դատական ակտի հիման վրա ԴԱՀԿ ծառայության Երևանի ստորաբաժանման հարկադիր կատարողի կողմից պարզվել է, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի 26.08.1999թ. թիվ 2-731 կատարողական թերթի համաձայն, հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 12.202.600 դրամ և 234.087 դրամ որպես պետական տուրք:

Գումարն ընկերության կողմից ամբողջովին մարվել է, ինչի մասին է վկայում Մյասնիկյանի ՀՏ կողմից ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Ծառայությանը հասցեագրված 04.02.2003թ. գրությունը, որով հայտնվել է, որ շահութահարկի և ԱԱՀ-ի գծով ընկերությունը վճարել է 4.004.300 դրամ և խնդրել է կատարողական թերթը ետ վերադարձնել:

Վերոգրյալ հանգամանքները նկատի ունենալով սույն վարչական գործով ընկերության մոտ հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ:

ՀՀ օրենսդրությամբ հնարավորություն է ընձեռնվել վարչական մարմնին իրականացնելու իրենց պարտականությունը և եթե առկա են որևէ իրավաբանական անձի մոտ հարկային պարտավորություններ, ապա դրանք հայտնաբերել ժամանակին և գանձել սահմանված կարգով:

Այսպիսով, Կենտրոնի ՀՏ կողմից որևէ ապացույց չի ներկայացվել, թե ինչով է պայմանավորված, որ դատարանի վճռի պահանջը, եթե այն չի կատարվել, համարվում է չմարված հարկային պարտավորություն, երբ այդ ժամանակահատվածից անցել է շուրջ 13 տարի:

Սույն գործի քննության համար էական է պատասխան՝ 2 հարցի վերաբերյալ.

ա) որոշման մեջ նշված հանգամանքները կամ արձանագրված խախտումները որ ժամանակաշրջանին են վերաբերում,

բ) եթե ստուգման ենթակա ժամանակահատվածում հարկային խախտումներ են արձանագրվել, ապա կարող էր հարկային պարտավորություններ գոյանալ ընկերության հաշվին, եթե խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող 3 տարին լրանալուց հետո:

Ընդ որում, հարցին պետք է մոտենալ հաշվի առնելով <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1-րդ և 16.2-րդ հոդվածների պահանջները, դատական ակտի կայացման ամսաթիվը, կատարողական թերթը վերադարձնելու պահանջատիրոջ դիմումը: Այս հանգամանքներից ելնելով, որոշումը կազմվել է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 62 հոդվածի դ) կետի, <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով հիշատակված նորմերով ընկերությունը խնդրում է.

1. Բավարարել գանգատը՝ 17.12.2012թ. հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ որոշումը և վարչական իրավախախտման վերաբերյալ 18.12.2012թ. արձանագրությունը դիտարկել որպես առ ոչինչ վարչական ակտեր:

2. Կիրառել հետևանք և վերադարձնել ընկերության կողմից վճարված գումարը՝ 1.109.000 դրամի չափով:

Ի լրումն ընկերության 12.02.2013թ-ի գրությամբ բերված գանգատի, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին հասցեագրված 04.03.2013թ-ի գրությամբ ընկերությունը մասնավորապես հայտնել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանի 04.08.1999թ. վճռում սխալ է նշվել բռնագանձման ենթակա գումարի ընդհանուր չափը, այն է՝ վերջինիս չափը պետք է կազմի ոչ թե 12.202.600 դրամ, այլ 11.703.640 դրամ: Հետևապես ԴԱՀԿ ծառայության կատարողական թերթի հիման վրա ավել է վճարվել 498.960 դրամ, որը նույնպես ենթակա է վերադարձման ընկերությանը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նախ հարկ է նշել, որ սույն գործը քննության է առնվել Հանձնաժողովի երկու նիստերի ընթացքում, սակայն համապատասխան ապացույցների բացակայության հետևանքով վերջնական որոշում չի ընդունվել: Միևնույն ժամանակ, քննարկումների արդյունքում Հանձնաժողովը եկել է եզրահանգման, որ սույն գործին առնչվող համապատասխան ապացույցների վեր հանման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է կատարել ծառայողական քննություն: Արդյունքում Հանձնաժողովի նախագահի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին միջնորդություն է ներկայացվել ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.03.2013թ-ի թիվ 2/77-Ա հրամանի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից անցկացվել է ծառայողական քննություն: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը եկել է հետևյալ եզրակացության, մասնավորապես. <<Ետազոտելով քննության ընթացքում ստեղծված նյութերը և հիմք ընդունելով ՊԵ կոմիտեում առկա հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական տվյալները հանձնաժողովը գտնում է, որ հնարավոր չէ ճշտել <Մատակարարման, արտադրության, վերանորոգման կենտրոն> ՓԲ ընկերության վերջնական հարկային պարտավորությունը, քանի որ կոմիտեում հարկ վճարողի վերաբերյալ տեղեկատվությունն առկա է սկսած 01.09.1999թ-ից>:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության 12.02.2013թ-ի գրությամբ բերված

գանգատը՝ ընկերության կողմից վճարված 1.109.000 դրամը վերադարձնելու պահանջի մասով, ենթակա է բավարարման:

Ընկերության 12.02.2013թ-ի գրությամբ բերված գանգատով պահանջ է ներկայացվել նաև առ ոչինչ դիտարկել 17.12.2012թ-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ որոշումը և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը: Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի համաձայն. <Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության դադարման, արգելանք դնելուց հետո՝ 1-ամսյա ժամկետում, հարկային մարմնի կողմից պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացնելու կամ հարկ վճարողի հետ սույն հոդվածում նշված պարտավորությունը մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերում գույքի արգելադրման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած>:

Ինչ վերաբերվում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը առ ոչինչ դիտարկելուն, ապա հարկ է նշել, որ <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն. <Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո տասն օրվա ընթացքում>:

Քննարկվող դեպքում գանգատը տրվել է ոչ թե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ, այլ՝ 18.12.2012թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության: Ընդ որում հարկ է նշել նաև, որ նույնիսկ եթե գանգատը տրված լիներ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ, ապա այն ենթակա չէր լինի քննության, քանի որ բաց է թողնվել <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված տասնօրյա ժամկետը:

Ընկերության 04.03.2013թ-ի գրությամբ բերված պահանջի հետ կապված, որը վերաբերվում է ԴԱՀԿ ծառայության կատարողական թերթի հիման վրա ավել վճարված 498.960 դրամը ետ վերադարձնելուն, հարկ է նշել հետևյալը:

Համաձայն ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Վերոգրյալից հետևում է, որ Հանձնաժողովն իրավասու չէ կայացնելու որևէ որոշում, որն իր էությամբ կհակասի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների 1-ին աստիճանի դատարանի 04.08.1999թ. վճռին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

<Մատակարարման, արտադրության, վերանորոգման կենտրոն> ՓԲԸ 12.02.2013թ-ի գրությամբ բերված գանգատը՝ ընկերության կողմից վճարված 1.109.000 դրամը վերադարձնելու պահանջի մասով, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵԴՅԱՆ